



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

16530


361/2
~ 25

1919

2010

2-25

Printed in Turkey



ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾ. ԸՆԴ. ՄԻՈՒԹԵԱՆ

ԳՈՐԾԱՊԱՏՈՒՄԸ

(ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՎԻՃԱԿԱՑՈՅՑ)



361 [Բար. զնշ. յ.]

2-25

1478



ՀԱՅԿԱԿԱՆ

5

361
2-25

u u


Printed in Turkey

7/30

50

ՀԻՄՆՈՒԱԾ
1906ԻՆ
ԳԱԶԻՐԷ

ՀԱՅԿԱԿԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ՄԻՈՒԹԻՒՆ



ՄԻՈՒԹԻՒՆԵ ԶՕՐՈՒԹԻՒՆ Է

«ԵՂՐԱՅՐ ԵՆՔ ՄԵՆՔ»



ՎՍԵՄ. ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱ
ՅԿԵԱՆՍ ԱՏԵՆԱՊԵՏ

† ՎՍԵՄ. ԵԱԳՈՒՊ ԱՐԹԻՆ ՓԱՇԱ
ՓՈԽ - ԱՏԵՆԱՊԵՏ

ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻ: 33 ՇԱՐԱ ՄԱՏԱՊԷԿ, ԳԱԶԻՐԷ (ԵԳԻՊՏՈՍ)

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎ

ՅԿԵԱՆՍ ԱՏԵՆԱՊԵՏ

Վ. ՍԵՄ. ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱ

ՓՈԽ-ԱՏԵՆԱՊԵՏՆԵՐ

† Վ. ՍԵՄ. ԵԱԳՈՒՊ ԱՐԹՐՆ ՓԱՇԱ

ԵՐՈՒԱՆԿ ԱՂԱԹՕՆ ՊԷՑ

ԴԱՆՁԱՊԵՏ

ԱՏԵՆԱԴՊԻ

Մ. ԱՆԳՐԱՆԻԿԵԱՆ

Վ. ՄԱԼԻՋԵԱՆ

ԽՈՐՀՐԳԱԿԱՆՆԵՐ

ԱՌԱՔԵԼ ՊԷՑ ՆՈՒՊԱՐ, Կ. ՇԷՐԻՏՃԵԱՆ ՊԷՑ, ՏԻՐԱՆ ՓԻԼԻՊՊՈՍԵԱՆ,

ՏԻԳՐԱՆ ԽԱՆ ՔԷԼԷԿԵԱՆ ԵՒ ՄԻՋՐԱՆ ՂԱԶԱՐՈՍԵԱՆ

ՓՈԽ-ԱՆԳՐԱՄՆԵՐ

ՏՕՔԹ. Ն. ՔԷՉԷՃԵԱՆ, ԼԵՒՈՆ ԱՍԱՏՈՒՐ ԵՒ ՃԱՆԻԿ ԶԱՔԵՐ

ՀԱՇՈՒԵՔՆՆԻՉ

ԴՐԱՄԱՏՈՒՆ

ԷՏ. ՓԱՓԱՋԵԱՆ

ԳՐԷՏԻ ԼԻՕՆԷ



ԱՄԵՐԻԿԱՅԻ ՆՐՉԱՆԱԿԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Գեր. Բաբգէն Եպիսկ. Կիլիկիեան՝ ասենապետ, Կ. Թ. Փուլմանեան՝ փոխ-ասենապետ, Վ. Քիրմնեան՝ ասենադպիր, Միհրան Գարակէօղեան՝ գանձապետ, Բրոժ. Մ. Յ. Անանիկեան, Տօքթ. Գ. Գալուստեան եւ Մաղաթ Պէրպէրեան՝ խորհրդական :

Տ. Ա. Տիֆլիսեան ընդհ. ֆուրսուդար :

ԾԱՆ.— Ամերիկայի վերջին հարթրդակցական է. Համաժողովի մէջ Նրջանակային Յանձնաժողովը վերակազմուած է նետեալ կերպով.—

Տօքթ. Կ. Յ. Գալուստեան՝ ասենապետ, Ա. Պ. Սէլեան՝ փոխ-ասենապետ, Յ. Մ. Փիլիպպոսեան՝ ասենադպիր, Մ. Գարակէօղեան՝ ընդհ. գանձապետ, Վեր. Գ. Պետրոսեան՝ գանձապետ (Նրջ. Յանձնաժողովի), Տօքթ. Մ. Եարսլմ եւ Մ. Պէրպէրեան՝ խորհրդական :

Տ. Ա. Տիֆլիսեան ընդհ. ֆուրսուդար :



1918
39

2002


ՆԻՒ-ԻՆԿԼԷՆՏԻ ՇՐՋԱՆ. ՕԺԱՆԴԱԿ ՅԱՆՉՆԱԽՈՒՄԲ

Կ. Յ. Գարակիշեան՝ *ասենապետ*, Գ. Մանուկեան՝ *փոխ-ասենապետ*, Մ. Գ. Պեր-
պերեան՝ *ասենապետ*, Թ. Գ. Դազարոսեան՝ *գանձապետ*, Մ. Նահիկեան՝ *խորհրդակա-
ն* Խ. Էլմասեան՝ *ընդհ. քարտուղար* :

ՔԱԼԻՓՈՐՆԻԱՅԻ ՇՐՋԱՆ. ՕԺԱՆԴԱԿ ՅԱՆՉՆԱԽՈՒՄԲ

Տօփ. Ս. Մ. Լօնկ՝ *ասենապետ*, Մ. Տեր Յովհաննէսեան՝ *ասենապետ*, Պ. Պօ-
րանեան՝ *գանձապետ*, Վեր. Յ. Միֆայեշեան, Գ. Նազարեան, Յ. Մ. Նշիկեան, Յ. Սար-
կաւազեան, Պ. Վարդանեան եւ Ասուէն Տիրան՝ *խորհրդակա-
ն* :

ՀԱՍՅԷ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՅԱՆՉՆԱԺՈՂՈՎԻ
Armenian General Benevolent Union
District Committee of America
287, 4th. Avenue, NEW-YORK (U. S. A.)



Հ. Բ. Բ. ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԱՍՐԱՀՐ


ՏԵՂԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎՆԵՐ

Հ. Բ. Բ. Միութիւնը ցարդ ունեցած է 202 Մասնաճիւղներ, որոնցմէ շատեր հար-
կադուեցան պատերազմի միջոցին իրենց գործուէութիւնը ընդհատել: Մասնաւորապէս
Թուրքիոյ Տեղ. Մասնաճիւղները բնօրէն հալածուեցան եւ ջնջուեցան բուրժ կառա-
վարութեան կողմէ: Յետագայ Տեղ. Մասնաճիւղները կը պահեն իրենց կազմը, չի-
կամ մասամբ, եւ ըստ Կանոնագրի Կեդր. Ժողովին հետ ուղղակի կը յարաբերուին.—

ԱՓՐԻԿԷ (5): Գահիրէ, Աղեքսանդրիա, Խարթում, Ատիս - Ապպա, Տերէ - Տափա :
ԵՒՐՈՊԱ (30): Լոնտոն, Մանչեսթըր, Բարիզ, Մարսել, Ժընեփ, Միլան, Սեյանիկ, Նիկոսիա,
Լաւոնքա, Շուսիա :

Իսկ հետեւեալ 20 Մասնաճիւղները, պատերազմի միջոցին դադրած, տակաւին Կեդրոն ծանու-
ցած չեն իրենց վերակազմութիւնը.— Պրիւքսէլ, Անվերս, Վիեննա, Համպուրկ, Պուքրէշ, Գոնսթանցա,
Եաշ, Ռոման, Յօքչան, Սօֆիա, Ֆիլիպք, Ռուսձուք, Պալըք, Վառնա, Պուրկազ, Բլեմնա, Տօպրիճ,
Սիլիպրէ, Տեռէ - Աղան, Օտեսա :

ԹՈՒՐԻՒՄ (50): Տակաւին իրենց վերակազմութիւնը չեն ծանուցած այդ շրջանի հետե-
ւեալ 50 Տեղ. Մասնաճիւղները.— Կ. Պոլիս, Իզմիր, Մանիսա, Աֆիօն - Գարահիսար, Պրուսա, Էր-
զընկա, Էնկիլքի, Կարին, Տարտանեյ, Պանտրմա, Եւզոկիա, Էտիրնէ, Տրապիզոն, Սամսոն, Ֆարքին,
Կիւրին, Պէյրուք, Սիս, Ազշէնիք, Վան, Կեսարիա, Տիգրանակերտ, Բարերդ, Մուշ, Բաղէշ, Ռոտտսօք,



ԸՆԴՀ. ՔԱՐՏՈՒՂԱՐ Տ. Վ. ՄԱԼԷՉԵԱՆ ԻՐ ԳՐԱՍԵՆԵԱԿԻՆ ՄԷՉ

Մերզիֆուն, Կամերկ, Հազո, Սերաստիա, Խարբերդ, Ֆենես, Էվերկ, Եոզղատ, Տերիկ, Չոմազը, Սղերդ, Հազո, Առվարինջ, Թոմարգա, Պարտիզակ, Մերտին, Արարկիր, Ազիզի, Մալաթիա, Զորու, Ատա - Բազար, Արդնի Մատեն, Մեծ - Նոր - Գիւղ, Սիվրի - Հիսար :


ԿԻԼԿԻՍ ԵՒ ՍՈՒՐԻՍ (14) :— Ատանա, Մերսին, Իսկենտերուն, Տարսոն, Տեոր - Եօլ, Մարաշ, Հալեպ, Այնթապ, Դամասկոս, Ուրֆա, Բիլիս, Օճազը, Օսմանիե, ձիճան :

ՊԱՂԵՍՏԻՆ ԵՒ ՄԻՋԱԳԵՏԻ (4) : Երուսաղեմ, Հայֆա, Պաղտատ, Պասրա :

ՀՆԴԿԱՍՏԱՆ (6) : Կալկաթա, Պոմպեյ, Ռանկուն, Սինկափուր, Պարավիա, Սուրաբայա :

ԱՄԵՐԻԿԱ (93) : Նիւ Եօրք, Պոսթոն, Ֆրեզո, Վաշինկթոն, Բրոքլին, Խոս - Բենալիս, Լին,

Ֆաուլթը, Լոս - Անճելոս, Բոսաթեք և Սենթրլ ֆոլս, Բեքերսոն, Հարրիսոն, Պրիմոսթրը, Տիբոնյ, Հեվերսիլ, Պինկնեթըն, Ուոլթերսոն, Սեյնթ - Փիլաուտի, Սենթ Բօլ - Մինիարոյիս, Սաուրն Միլվոքի, Միլֆրոտ, Նիւ Հեվըն, Թուլարա, Բոսթաք, Բիչմընտ, Նիւ Պրիքեյն, Լուիզվիլ, Ֆիլատելֆիա, Ռեհին, Չիքաօ, Ուստը, Ուեսթ - Հոպքոն, Եղեմ, Չրիսի, Պրաքքըն, Ուայթհեմպիլ, Բիալի, Սան - Ֆրանչիսքօ, Նիւ Պրիքթօրք, Միալպոսօ, Թրոյ, Բիլվեյնտ, Սիրեքիզ, Եանքըս, Լօրենս, Ֆիլադելֆ, Սըմիթ, Նեշուե, Ինտիանարոյիս, Սրրինկֆիլտ, Ֆրիստ, Լեմինսթրը, Սինսինաթի, Լոուէլ, Պրիմրօրք, Նիակարա - Ֆոլս, Բօքսթըր, Թըրեթըն, Պարիսօր, Սթոնհամ, Սիեթլ, Էքքըն, Վուսաթեք, Տօվր, Սըմըրվիլ, Փարլիեր, Պրուքլին, Նիւբրն Ըրըր - Ֆոլս, Կրենտ Բեքիք, Մուլտըն, Ֆրանքլին, Նիւարք, Չարլսթոն, Պուեբլո - Այրե, Տայնուպա, Խոս - Բրոքլին, Մանչեսթր, Սեյմա, Էյմայրա, Իրի, Սանկըր, Ալպընի, Ռիվըր, Տօքսթըր, Գորտօպա, Թոլիտօ, Սենթ - Լուիս, Փորթլենտ, Բինկլպուրկ, Ուոքլին, Հրոսթըն, Թամսընվիլ, Ուիսթըն :



Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԴԻԻԱՆԱՏՈՒՆԸ

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Բարերար Անդամներ

Վսեմ. Պողոս փաշա Նուպար

- | | |
|--------------------------------|---------------------------|
| Վսեմ. Աբրահամ փաշա Բարթոյ (*) | Տիկ. Ա. Գ. Սարգիսեան (*) |
| Տիգրան խան Բեշեկեան | Երուանդ Յակոբեան |
| Գրիգոր Մեօքիմեսեան (*) | Տօֆ. Պ. Կոստանդեան |
| Երուանդ պէյ Աղաթօն | Բ. Պ. |
| Գեորգ Սարգիսեան | Մարգար Միրզա (*) |

Պատշոյ Անդամներ

Վսեմ. Եագուպ Արթին փաշա (*), Առաքել պէյ Նուպար, Մ. Անդրանիկեան, Տօքթ. Ն. Տաղաւարեան (*), Կ. պէյ Շէրիտեան, Գրիգոր Եղեայեան (*), Մ. Մարկոսօֆ պէյ, Տիկ. Մարի Նուպար փաշա, Տիկ. Նոյեմի Գափամանեան (Բարիզ), Վահան Մալեզեան, Լեւոն պէյ Յակոբեան (Բարիզ), Օր. Աննա Չամիչ (Բարիզ), Վսեմ. Յովհաննէս Էֆ. Ալլահվերտի (Կ. Պոլիս) (*), Մարքիզուհի Ինճու Վէնթուրի ձէնօրի (Ֆիրէնցէ), Մեսրոպ Նուպարեան (Իզմիր), Սեդրաք Դաւիթեան (*), Տիրան Փիլիպոսեան, Վեհ. Սահակ Բ. (Կաթողիկոս Կիլիկիոյ), Գեոր. Մուշեղ Արքեպիսկ. Սերոբեան, Լեւոն Սէմերեան (Կ. Պոլիս), Աթանիկ Էզնայեան (Բարիզ), Ռափիկ Մարկոսեան (Բարիզ), Ազաման Թահթապրունեան (Բարիզ) (*), Պետրոս պէյ Գափամանեան (Վան) (*), Տօքթ. Անդրանիկ Այվազեան (Նիւ Եօրք) (*), Յակոբ Բրքեաշարեան (Հանքըն), Տիգրան Չամբէրթէն (Անվերս), Սեթ Գափամանեան (Վան), Վահան Զիւրքեան (Պոսթօն), Միրնան Ղազարոսեան, Միրնան Գարակէօզեան (Նիւ - Եօրք), Կարապետ Փուշմանեան (Չիքաօ), Գեորգ Տէր Ղազար Արգարեան (Ճազ), Հապիպ Գառնուկ, Մկրտիչ Յար. Էտզար (Սինկափուր), Յովհաննէս Կ. Գալստան (Կալկաթա), Պետրոս Հ. Կրէտ (Կալկաթա), Գեոր. Թորգոմ Եպիսկ. Գուշակեան, Սիմոն Ղարիպեան (Պասրա) :

(*) ՀԱՆԳՈՒՅԵԱԼ

ՆՍՆ. — Կեդր. վարչ. Ժողովը ԲԱՐԵՐԱՐ ԱՆԴԱՄ Տիգրան փաշայի այն անձեանց որ մէկ անգամէն գէր 1000 անգլ. ոսկիի նուէր մը կ'ընեն Միութեան :
Նոյնպէս ՊԱՏԻՈՅ ԱՆԴԱՄ Տիգրան փաշայի այն անձեանց որ մէկ անգամէն գէր 400 անգլ. ոսկի կը նուիրեն Միութեան :
Բաց առի, Կեդր. վարչ. Ժողովը կրնայ այդ տիպի անձեանց մին կամ միւսը տալ այն անձեանց, որ բացառիկ կամ նշանաւոր ծառայութիւններ կը մատուցանեն Միութեան :
Իրաւամբ ՊԱՏԻՈՅ ԱՆԴԱՄ Էն անգամիկ Կեդր. վարչ. Ժողովի անդամները որ Միութեանը հիմնելու ստատուած են :


Գործօն Անդամներ

Հ. Բ. Ը. Միութիւնը համազգային մեծ ընտանիք մըն է, որուն եղբայրական դրօշին տակ, ձեռք ձեռքի, հայրենիքին կը ծառայեն այր ու կին, փոքր ու մեծ, հարուստն ու գործատորը, առանց դաւանանքի, դասակարգի եւ կուսակցութեան ու եւ է խտրութեան : Մեր ազգին համար իր տեսակին մէջ միակն է Հ. Բ. Ը. Միութիւնը, որ խտիրը կը դրժէ : Անիկա միակ պայման մը ունի.— կը բաւէ հայ ըլլալ՝ անդամակցելու համար, կը բաւէ հայ ըլլալ՝ նպաստաւորուելու համար :

Ներկայիս այս մեծ ընտանիքին աշխարհիս ամէն կողմը ցրուած անդամներուն թիւն է 13939, որ հետեւեալ կերպով կը մանրամասնուի.— Կեդր. Ժողովի մօտ արձանագրուած (զանազան տեղերէ) 77, Ափրիկէ 862, Եւրոպա 1580 (որոնց 920 ը պատերազմի պատճառով յարաբերութենէ զրկուած), Ամերիկա (6322), Թուրքիա 3966 (նոյնպէս յարաբերութենէ զրկուած եւ հաւանօրէն մեծ մասամբ նահատակուած), Կիլիկիա եւ Սուրիա 745, Պաղեստին եւ Միջագետք 172, Հնդկաստան 216 : Ատոնցմէ զուրս կը մնան վերջին երեք ամիսներու միջոցին արձանագրուած կամ կեղծուած զեռ նոր ծանուցուած անդամները :

Դիտելի է որ այս մասին առաջնութեան « ըրբօր » ը շահած է Ֆրէզնօյի արի Մասնաճիւղը, որ 1022 գործօն անդամ ունի : Ֆետոյ կուգան հետեւեալ Մասնաճիւղները՝ Նիւ - Եօրք (553), Կա - հիրէ (547) եւ Ուսար (541) : Ներգաղթէն ապին՝ Կիլիկիոյ Մասնաճիւղները եւս ետ չեն մնար :

Աւելցնենք թէ վերոյիշեալ 13939 անդամները ստորագրած են ամսական եգ. Ոսկի 1201 անդամովմար, որուն եգ. Ոսկի 360ը թշնամի երկիրներու մասն է : Եթէ անձնիւր անդամ իր խոստումը յարգէր, տարեկան 15000 եգ. Ոսկի պիտի գոյանար լոկ անդամավճարներէն :



ՅԻՆԱՏԱԿԱՐԱՆ
Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ
ՆԱՀԱՏԱԿ ԱՆԳԱՄՆԵՐՈՒՆ
ԶՈՂՈՒԱԾ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՀԱՍԱՐ
1915—1918

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ



Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԴԱՄԱՍԿՈՍԻ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԸ ԵՒ ՀԻՒԱՆԴԱՆՈՅԸ
(Նախագահութեամբ Գեորգի Սարաձեան Եպիսկոպի եւ Գ. Պանսպան Գերապայճառի)

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ՄԵԾ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ

Ստուել կը դնենք անունները այն բարեսէր ազգայիններուն որ Միութեանց հիմնադրութենէն (1906) մինչև այսօր ամէնէն շատ մասէի տուրք վճարած կամ նուիրատուութիւն քրած են, դրամով, արժեքուղով կամ կալուածով.—

Ամերիկայի Հայ Ազգ. Միութիւն (ձեռամբ Ազգ. Պատուիրակութեան) Եգ. Ոսկի 5627: Բ. Պ., կտակ, 5509: Լևոն պէյ Յակոբեան (Բարից) 4625: Տօքթ. Պ. Կասանդեան (Եգմիր), կտակ, 3535: Գրիգոր Մեօքմեան (*), 3000: Տիգրան խան Բեյեկեան (Բարից) 2900: Մանգեսթրի Հայ Տիկնանց Միութիւն (1657): Friends of Armenia (Մեկտրն) 1943: Մարտեան Ընկ. 1400: Միսաք Մարեան Որդիք (Պիւքսէլ) 1130: Պօղոս Նուպար փաշա 1000: Արքայնամ Փաշա Բարդուղ (*), 1000: Գեորգ Սարգիսեան 975: Տիկ. Աղանի Գ. Սարգիսեան (*) 975: Երուանդ Յակոբեան (Բարից) 964: Մարգար Միրզա (*) 964, (Տիկ. Մարի Ռ. Որբերեանի կողմէ): Եգիպտանայ Նախատամտոց Մարմին 880: Բօր-Սայիտի Գաղթային Վարչութիւն 875: Ռափիկ Մարկոսեան (Բարից) 771: Յակոբ Գրքեաշարեան (Հաճըն) 702: Գահիրէի Հայկ. Սրան 626: Միլանի Հայ Տիկնանց Միութիւն 573: Մ. Գազանեան (Ուստր) (*) 586: Տիկ. Մարի Պ. Նուպար փաշա 500: Տիկ. Մարքիզուհի Վենթուրի ձեռքի, ձեռք Ապրո, (Ֆիրենցա), 497: Յովն. Գալատան (Կալկարա) 487: Պետրոս կրեա (Կալկարա) 487: Մանգեսթրի Նախատանտաք Մարմին 487: Տիգրան Չամբերքեան (Անկիրս) 444: Մեսրոպ Նուպարեան (Եգմիր), կտակ, 433: Գեորգ Ղ. Տ. Արգար, (Ճավա) 427: Գալիք Մարեան (Լա Հէյ) 420: Տիկ. Նոյեմի Գալամանեան ձեռք Նուպար (Բարից) 400: Սեդրաք Գալիքեան (*) 400: Հապիպ Գառնուկ 400: Եագուպ Արքին փաշա (*) 400: Օր. Աննա Չամիչ (Բարից) 390: Յովնաննէս Ալլան-վերտի (Կ. Պոլիս) 390: Արանիկ Էգնայեան (Բարից) 385: Ագարան Թանրապրունեան (Բարից) (*) 385: Հրանտ ձեպանիրճեան (Բարից) 372: Բարիզի Հայ Տիկնանց Միութիւն 345: Եսայի Կարիկեան 305: Յովն. պէյ Մարտեան 300: Տիկ. Գայեանէ Յ. Նշկեան (Ֆրեզնօ) (*) 300:

(*) ՀԱՆԳՈՒՑԵԱԼ



Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ՏԻԿԻՆՆԵՐԸ
ՀԱՆԴԵՐՁԵՂԷՆ ԿԸ ԲԱՅՆԵՆ ԲՕՐ-ՍԱՅԻՏԻ ԳԱՂԹԱՎԱՅՐԻՆ ՍՈՒԷՏԱՅԻ ԿՈՐԻՒՆՆԵՐՈՒՆ


ԱՆԳԵՄԱՆԿՅՈՒԹԵԱՆ ՊԸՅՄԱՆՆԵՐ

Հ. Բ. Ը. Միութեան կարող է անդամակցիլ, առանց սեռի կամ դասանանքի խտրութեան, ամեն տարիքէ նայ, ինչ դասակարգի կամ կուսակցութեան որ պատկանի, կը բաւէ որ յանձն առնէ յարգել Ընկերութեան Կանոնագիրը և կանոնաւորապէս հատուցանէ իր անդամարժիքը:


Ամեն անդամ, արձանագրութեան սրահուն, պարտաւոր է նախ և առաջ վճարել մուտքի տուրք մը, որ 10 Ե. Ղ. է պակաս չի կրնար ըլլալ, ինչպէս նաև անդամավճար մը, որ ամսական 5 Ե. Ղ. է պակաս չի կրնար ըլլալ: Արտասահմանի համար համարժեք սակ՝ 50 և 25 սեկ, 2 և 1 շիլին, 2,50 և 1,25 ֆրանք:

Անդամակցութեան համար դիմել մերձաւորագոյն Տեղ. Մասնաժողովին:


ԾԱՆ.— Ամէնէն շատ անդամարժիք վճարող գործօն անդամներն են՝ Պօղոս Նուպար փաշա 5627 Ե. Ոսկի 120 և Սիմօն Ղարիպեան (Պատրա), Ըուրի 1800:



ԽՄԲԱՆԿԱՐ ՊԱՂՏԱՏԻ ԱՅՐԻԱՆՈՑ-ՈՐԲԱՆՈՑԻ
(ԲՕՐ-ՍԱՅԻՏԻ ԳԱՂԹԱՎԱՅՐԸ ՓՈՒԱԳՐՈՒԱԾ ԵՒ Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ՓՈՒԱՆՑՈՒԱԾ)



ԿԻԼԻԿԻՈՅ ՎԵՂ. ՍԱՀԱԿ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍԸ
ԲՕՐ-ՍԱՅԻՏԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅԻՆ ՄԷՋ



ԲՕՐ-ՍԱՅԻՏԻ ԳԱՂԹԱՎԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ՕՐԵՐՈՒ ՎՐԱՆ - ԵԿԵՂԵՑԻՆ



1912 ԻՆ Ն. Բ. Շ. ՄԻՈՒԹԵԱՆ ՔԷԼԷԿԵԱՆ ՈՐԲԱՆՈՅ ԿԸ ՓՈՆԱԳՐՈՒԻՆ ՀԱՃԵՆԷՆ ԽՈՒՄԲ ՍԸ ՈՐԲԵՐ



1919 ԻՆ ՔԷԼԷԿԵԱՆ ՈՐԲԱՆՈՅ ԿԸ ՓՈՆԱԳՐՈՒԻՆ ՀԱՍԱ - ՆՈՍՍ ԵՐՋԱՆԷՆ ԽՈՒՄԲ ՍԸ ՈՐԲԵՐ

« Զ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻՒՆԸ ԵՒՍ. ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՆԱԽՆԵԹԱՑ ԵՂԵՈՒՆԻՆ. ԶԱՐԱԶԱՐ ՀԱՆԱԾՈՒԹԵԱՒ : ՔԱՆՒ՝ ՔԱՆՒ ՆԱ- ՀԱՏԱԿՆԵՐ՝ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆԻ ԼԱԽԱԳՈՅՆ ԱՆԴԱՄՆԵՐԷՆ՝ ԱՅՅԻՄ ԿԸ ՀԱՆԳՉԻՆ ԳԵՐԵԶՄԱՆԻ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՄԷՋ... »:

ՍԱՀԱԿ ԿՍԹՈՂԻԿՈՍ ԿԻԼԻԿԻՈՅ


„ ԿՐԿՆԱՊԱՏԻԿԸ “

Այս ցուցակը բացուած է Զ. Բ. Ը. Միութեան տասնամեակին առթիւ, Ամերիկայի Շըր- ջակային Յանձնաժողովի անձնուէր նախագահ Գեր. Տ. Բարզէն Նախկ. Կիլիսիայի նախաձեռ- նութեամբ : Հո՛ն կ'արձանագրուին այն սրտցաւ անդամները որ, ի յարգանս Քուրքիարնակ նահատակ անդամներու, կը բազմապատկեն իրենց յանձն առած անդամավճարը, իրենց եղերաբախտ ընկեր- ներուն ձգած բացը զոցելու եւ անոնց յիշատակը յարգելու ազնիւ փութկոտութեամբ :

Թո՛ղ իւրաքանչիւր անդամ իր վրայ առնէ նահատակ անդամի մը ամսաբաժինը. եւ առ այդ կը բաւէ որ մտածէ թէ քանինէր, իր սիրելիներէն, որ Միութեան շուրջ բոլորուած էին ու կ'աշխատէին միեւնոյն դրօշին տակ, այսօր այնչեւ չիկա՛ն, նահատակ եղած են հայրենիքին համար, եւ անոնց այրիները ու որբերը մերի եւ անօթի կըսպասեն պատու մը հացի եւ կտոր մը լաթի . . . :

« Եթէ այս կրկնապատկելու օրինակը գործադրուի, կ'ըսէր իր կոչին մէջ Ն. Գերապատու- թիւնը, համոզուած եմ որ ազդեցութիւնը հրաշալի պիտի ըլլայ եւ հայութեան այն տագնապալի օրերուն իսկ Բարեգործականը մեծ յաջողութիւններ պիտի ունենայ. եւ այդպիսի յաջող վիճակ մը պէտք է Զ. Բ. Ը. Միութեան, որպէսզի ան կարող ըլլայ իր լման դերը կատարել : »

Մասնաւոր յիշատակութեան արձանի է Տ. Սեպուհ Փափազեան, Զ. Բ. Ը. Միութեան Տիգրան- կեթի նահատակուած Մասնակիցին վերապրող կազմ ազիւս անդամներէն, որ իր սիրուած անդամավո- ճարները Կեդր. Ժողովին դրկած է, ամսաբաժինը եւս ճանապարհակալ. եւ « մտորելով որ բոլոր անոնք, որ իրեն նման իրենց բնական ըմբռնումը քրտակա՞ն դժոխքէն ողջամը վերազնայնելու բախտը կ'ունենան, չի մտնան սոյն երախտագիտական պատեր » , դէպի անոնք որ նահատակուեցան եւ դէպի անոնք որ կը ճառապին . . . :



Զ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԲՕՐ-ՍԱՅԻՏԻ ՈՐԲԱՆՈՅ-ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ԵՐԷՑ ՍԱՆԵՐԸ

« ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ, ԻՐԵՆԻ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԲԱ- ՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ, ՓՈՒՐԻԿ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՄԸՆ Է : » ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ

Զ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿՆ Է

Ա. Հայրենի հողին հաւասարիւմ մնացած հայ ժողովուրդին մտաւոր եւ բարոյա- կան զարգացմանը աւաստել :


Բ. Անոր նիւթական եւ սննդական կացութիւնը բարւոյնելու աշխատի :

Գ. Այս արդիւնքը յառաջ բերելու ծառայող որ եւ ձեռնարկ կաւ հրասարա- կութիւն փաշաչեւել :

Հետեւաբար՝ Զ. Բ. Ը. Միութիւնը, յօգուտ հայրենի հողին հաւասարիւմ մնացած հայ ժողովուրդին, կը հիմնէ կամ նպաստներով կ'օժտէ վարժարաններ, որբանոցներ, ընթերցարաններ, արհեստանոցներ, աշխատանքի տուններ, հիւանդանոցներ, դարձա- նասուններ, եւ ուրիշ նմանօրինակ ազգային հանրօգուտ հաստատութիւններ : Կ'օգնէ հայրենիքի կարօտ հայերուն՝ առանց դաւանանքի եւ այլ խտրութեան : Կը պաշտպա- նէ հողագործը, անոր հայթայթելով հող, սերմնացու, կենդանի եւ զործիք : Կը քաջաչեւել զործաւորը եւ տեղական արհեստագործութեանց զարգացումը : Կը տարածէ զիւզատըն- տեսական արդիական գիտելիքները : Կը ստեղծէ կարօտ համայնքներուն ինպատ աշ- խատութեան եւ արդիւնաբերութեան նոր միջոցներ : Մովէ, հրդեհէ եւ ուրիշ օ եւ է աղէա- քէ հայրենալմակ արկածեալներուն անմիջական օգնութիւն կը հասցնէ :

Մէկ խօսքով, իր միջոցներուն ներսը չափով, եւ իր բացօրոջ նպատակին սահմա- նին մէջ, Միութիւնը կ'աշխատի հայ տարաբախտ ժողովուրդին վիճակը բարւոյնելու, հնարաւոր ընելով անոր կրթական զարգացումը եւ տնտեսական բարգաւաճումը :

(ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ, 80Գ.1 ԵՒ 14)



Զ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԲՕՐ-ՍԱՅԻՏԻ « ՄԻՍՈՒՄԱՆ » ՊՕՑ-ՄՔԱՌՈՒԹՆԵՐԸ

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ՍԵՓԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հ. Բ. Ը. Միութիւնը ներկայիս զլիաւորաբար կը վարէ, իր առանձնայատուկ միջոցներով, հետեւեալ ազգոգուտ հաստատութիւնները.—

- 1.— ՏԻԿԱՆՆՑ ԿԵԴՐ. ՀԱՆԴԵՐՁԱՐԱՆ, Աշխատանոց եւ Մթերանոց, Գահիրէ:
 - 2.— «ՍԻՍՈՒԱՆ» ՎԱՐԺԱՐԱՆ, 2250 երկսեռ աշակերտներ, Բօր-Սայիտի Գաղթավայրը:
 - 3.— ՈՐԲԱՆՈՑ-ՎԱՐԺԱՐԱՆ, 350 երկսեռ որբեր, , ,
 - 4.— ԱՅՐԻԱՆՈՑ-ԱՇԽԱՏԱՆՈՑ, 90 այրիներ եւ աղջիկներ, , ,
 - 5.— «ՍԻՍՈՒԱՆ» ՊՕՅ-ՍՔԱՌԻԹՆԵՐ, 210 հետազօտիչներ, , ,
 - 6.— ՀԱՅՈՒՆՆԵՐ-ԱՊԱՍՏԱՆԱՐԱՆ, 120 այրիներ եւ որբուհիներ, Դամասկոս:
 - 7.— ՀԻՒԱՆԴԱՆՈՑ-ԴԵՂԱՐԱՆ, Դամասկոս:
 - 8.— «ՔԷԼԷԿԵԱՆ» ՈՐԲԱՆՈՑ, 200 որբեր, Տէօրթ-Եօլ:
 - 9.— ՀԻՒԱՆԴԱՆՈՑ-ԴԱՐՄԱՆԱՏՈՒՆ, Մերսին:
 - 10.— ՈՐԲԱՆՈՑ-ՎԱՐԺԱՐԱՆ, 200 որբեր, Հաճըն:
 - 11.— ՀԻՒԱՆԴԱՆՈՑ-ԴԱՐՄԱՆԱՏՈՒՆ, Տարսոն:
 - 12.— ԿՏԱԻՒ-ԳՈՐԾԱՏՈՒՆ, Տարսոն:
 - 13.— ԳՈՐԳԻ ԵՒ ԳՈՒԼՊԱՅԻ ԳՈՐԾԱՏՈՒՆ, Ատանա:
- ԾԱՆ.— Անմիջական ծրագիր = Որբանոց՝ Սիս, Հիւանդանոց՝ Տօրթ - Եօլ, ևն.:



ՏԱՐԱԳԻՐ ՄԱՅՐԸ
(ՍԱԼԹԷՆ ԵՐԻՔՈՎ.)



ՀԱՅ ՏԱՐԱԳԻՐԸ
(ԱՆԱՊԱՏԻՆ ՄԷՋ)



ՏԱՐԱԳԻՐ ՄԱՄԻԿԸ
(ՀԵՏԻՈՏԵ ԵՒ ԺՊՏԱԴԷՄ)

ՀԱՅԿ. ԲԱՐԵԳ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ

ԺԳ. Տ Ա Ր Ե Շ Ր Ջ Ա Ն Ի (1918)

Հ Ա Շ Ո Ւ Ե Կ Շ Ի Ռ Ի Ն Ա Մ Փ Ո Փ Ո Ց Թ Ը

1918
39

	ԳՈՅԲ	ՊՈՐՏԲ
ԱՐՃԵԹՈՒԴԹՆԵՐ		
1.— Հիմնական Դրամագրութիւն	32726	
2.— Մասնաւոր Դրամագրութիւն	9200	
ԿԱԼՈՒԱՆՆԵՐ		
1.— Հիմնական Դրամագրութիւն	3131	
2.— Մասնաւոր Դրամագրութիւն	10932	
ԵՐԱՇԽԱՆՈՐՈՒԹԻՒՆ		
Կեդր. Ժողովի Անդամներու Երաշխարարութեան արժեւորումներ		
ԿԱՐԱՍԻՔ ԵՒ ԳՐԱԳՈՐԱՆ		
Պարբերաշիջում	350	
ԸՆԹԱՑ ՀԱՇԻՒՆՆԵՐ ԵՒ ԱՌԱՆԳՆԵՐ	7898	
ՏՊԱՐԱՆ ԵՒ «ՄԻՈՒԹԻՒՆ»	774	
ՏՐԱՄԱԳՐԵԼԻ ԳՈՒՄԱՐՆԵՐ		
Դրէտի Լիճնէ	2539	
Պանք Օթօման	7068	
Շրջ. Յանձնաժողով	3826	
Կեդր. մատուկ	1489	14922
		Ե. ՈՍԿԻ 81283
ՀԻՄՆԱԿԱՆ ԳՐԱՄԱԳԼՈՒՆ		
1.— Մուտքի Տօրթ	20149	
2.— Անդամավճարի 1/6 Ը	7694	
3.— Նուէրներ (անորոշ)	10138	37981
		ՄԱՍՆԱՒՈՐ ԳՐԱՄԱԳԼՈՒՆ 21459
ՊԱՐԲԵՐԱՇԻՋՄԱՆ ՀԻՄՆԱԳՐԱՄ		
ՍՏԻՊՈՂ. ՆՊԱՍՏՆԵՐՈՒ ՀԻՄՆԱԳՐԱՄ	918	
ԿԱՐԱՍԻՔ ԵՒ ԳՐԱԳՈՐԱՆ ՊԱՐԲԵՐԱՇԻՋ	350	
ԿԵԳՐ. ԺՈՂՈՎ. Ի ԱՆԳՈՒՄՆԵՐՈՒ ԵՐԱՇԽ.	1350	
ԸՆԹԱՑ. ՀԱՇԻՒՆՆԵՐ ԵՒ ԱՌԱՆԳՆԵՐ	9787	
ԵԿԱՄՈՒՏՆԵՐ		
1.— Հիմնական Եկամուտ	8888	
2.— Մասնաւոր Եկամուտ	21344	
		30232
ՆՊԱՍՏՆԵՐ		
1.— Հիմնական Եկամուտ	3371	
2.— Մասնաւոր Եկամուտ	15413	
3.— Ստիպող. Հիմնադրամէն	206	
ԻՍԿԻՔ, ԵՒՆ.		
4.— Պարբերաշիջ. Հիմնադրամէն	37	
5.— Մասն. Դրամագրութիւններու	539	
6.— Ընդհ. ծախք	1664	
		21230
ՏՐԱՄԱԳՐԵԼԻ ԵԿԱՄՈՒՏ		
Համագումար Եկամուտի	30232	
ԶԵՂՋՅԱՒ		
Նպաստ, ծախք, ևն.	21230	9002
		Ե. ՈՍԿԻ 81283

ԾԱՆ.— Սոյն Հաշուեկշիռը հաշուեցնիչ Տ. Կ. Փափագեանի կողմէ քննուած եւ հաստատուած է:

Հ. Բ. Ը. Միութիւնը 1906 - 1918 Նպաստակազուցութեամբ է Ե. Ո. 73888 զանազան ազգոգուտ նպասակներու (որբանոցներու, վարժարաններու, աղէտեակներու, ևլն.):


Հ. Բ. Ը. Միութեան Հանդերձարանը մինչև 30 Ապրիլ իբրև նպաստ դրկած է 456 հազար հանդերձեղէն (70577 կօր, կերպասեղէն 5563 օխա եւ 248 ծրար, ևլն.):

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԸՆԴՀ. ՀԱՍՈՅԹՆԵՐԸ 1918 ԻՆ

ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԻՏԻ հաշույն (անձեռնմխելի)	3230	
ՀԻՄՆԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏԻ » (տրամադրելի)	5159	
ՊԱՀԵՍԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԻՏԻ » (ստիպողական նպաստի յատուկ)	406	
ՊԱՐԲԵՐԱԾԵԶՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ » (արժեթուղթներու յատուկ)	37	
ՄԱՆԱԴՈՐ ԴՐԱՄԱԳԼՈՒԻՏԻ » (տրամադրելի՛ ըստ պայմանի)	1133	
Ձեռքելի՛ Տ. Չամբէրձէնի մասն. նուիրատուութիւնը՝ առժամակէս փոխանցուած Տարագրեալներու Հիմնադրամին	444	689
ՏԱՐԱԳՐԵԱԼՆԵՐՈՒ ԵՒ ԱՂԷՏԵԱԼՆԵՐՈՒ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ հաշույն	9311	
ՈՐԲԱՆՊԱՍ ՏԻՄՆԱԴՐԱՄԻ հաշույն	3915	
ՏԻԿԱՆՑ ԿԵԴՐ. ՀԱՆԴԵՐՁԱՐԱՆԻ հաշույն	5079	
ՋԱՆԱՋԱՆ հաշիւներու	1098	19403

ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԸՆԴՀ. ՀԱՍՈՅԹՆԵՐՈՒ ԵԳ. ՈՍԿԻ 28924

ԾԱՆ.— 1918 ին ընդհ. ծախքը եղած է Ե. Ո. 1664, այսինքն ընդհ. հատոյթին շուրջ 6 0/0 Ը :



Ա. Հ. Ա. Գ.

« . . . ԱՅՍ ԵՄԵՐԱԿԵՐՈ ՎԱՏԱԹԵԱՆ ՀԱՆԳԷՊ, ԱԶԳ. ՊԱՏԱՌԵԱԿՈՒԹԻՒՆԸ, ԿԸՎԱՏԵԼՈՎ, ՈՐ ՀԱՍԱՅ ԵՆՔ ԱՅՆՊԵՍԻ ՎԵՃՈՒԿԱՆ ՎԱՅՐԿԵԱՆՆԵՐՈՒ ՈՒՐ ԱՌԱՒԵԼԱԳՈՑ ԶԱՆԳԵՐԸ ԱՆՀՐԱԺԵՏ ԳԱՐՁԱՅ ԵՆ, ԱՄԲՈՂՋ ԱԶԳԻՆ ԿՈՉՈՒՄ ԿՐՆԷ, ԱՄԷՆ ՏԵՂ ԿՈՐ ՀԱՆԳԱՆՎԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆՎԵԼՈՒ ԿԱՄ ՎԵՃԱՆՁՆԱԲԱՐ ՄԳՈՒՄ ՏԱԼՈՒ ԱՐԳԷՆ ՍԿՈՒՍԸ ՀԱՆԳԱՆՎԱՅՈՒԹԵԱՆ :

« . . . ՄԵՐ ՄԱՐՏԻՐՈՍՆԵՐ ԵՒ ՀԵՐՈՍՆԵՐՈՒ ԱՅՐԿՆԵՐՈՒՆ ԵՒ ՈՐԵՆՈՒՆ ՀԱՄԱՐ, ՄԵՐ ՏԱՐԱԳՐԵԱԼՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ ՈՐ ԱՐՄՈՐԱՎԱՅՐՆԵՐՈՒ ՄԷՋ ԿԸ ՀԻՔԵՆ, ԱԶԳ. ՊԱՏԱՌԵԱԿՈՒԹԻՒՆԸ ԲՈՒՐ ԵՐԱՐՆԵՐՈՒ ՀԱՅՆԵՐՈՒՆ ԿՈՉՈՒՄ ԿՐՆԷ ԵՒ ԵՐ ՏՈՅՈՐ ԿԸ ԳՆԷ ԱՆՈՑՑ ՀԱՅՐԵՆԱՍԵՐՈՒԹԵԱՆ ՎԵՐՍ :

ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԳՐԱՄԱՍԿՈՍԻ ՀԻՒԱՆԳԱՆՈՅԻ ՊԱՇՏՅՈՆԵՐՈՒԹԻՒՆԸ

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ՎՍԵՄ. ԱՏԵՆԱՊԵՏԻՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ

Քարիզ, 12 Յուլիս 1918

Սիրելի Մալէզեան,

Ստացայ ձեր թիւ 10018 եւ 7 Յունիս թուական նամակը, որով ինձի դրկած էիք մեր Հայկ. Ընդհ. Միութեան 1917 Տարեշրջանի հաշուեկշիւը :

Խորին գոհունակութեամբ հաստատեցի ձեռք բերուած շատ գեղեցիկ արդիւնքները : Մեր ընկերութեան յառաջդիմութիւնը արտայայտուած է բարեսիրական բազմաթիւ արարքներով եւ յօգուտ մեր եղբարախտ հայրենակիցներուն գործածուած նպատակներով : Այս բանը անգամ մը եւս կ'ապացուցանէ Միութեան օգտակարութիւնը եւ իմ մասիս անկեղծօրէն կը հրճուիմ անոր հիմնարկութեան մասնակցած ըլլալուս, ուղղելով միեւնոյն ատեն իմ ջերմագին շնորհակալութիւններս եւ շնորհաւորութիւններս մեր Կեդր. Ժողովի բոլոր անդամներուն, որ իրենց անձնուէր աշխատակցութեամբ մեր մարդասիրական ձեռնարկին բարգաւաճմանը սատարած են :

ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ

Քարիզ, 15 Յունիս 1919


Սիրելի Մալէզեան,

Շնորհակալ եմ հաշուակալութեան վիճակացոյցներուն համար զոր ինձի դրկած էք եւ որ ցոյց կուտան Միութեան ելմտական վիճակը 31 Դեկտ. 1918 ին եւ 30 Ապրիլ 1919 ին :

Այս վիճակը իրապէս հիանալի է եւ մենք ամէն տեսակէտով պարտինք հրճուիլ :

Կը շնորհաւորեմ ձեզ, քանզի զիտեմ բոլոր բաժինը որ ձեր գործունէութեան կ'լինայ այս գեղեցիկ արդիւնքին մէջ :

ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ



Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԲՈՐ-ՍԱՅԻՏԻ «ՄԻՍՈՒԱՆ» ՊՕՑ-ՍԲԱՌՈՒԹՆԵՐԸ

ՀԱՅ ՈՐԲԵՐԸ ԱՌԱՋ



ՍԱԼԹԷՆ ԽՈՒՄԲ ՄԸ ՈՐԲԵՐՈՒ ԿԱՐԱՒԱՆԸ ԳԵՊԻ ԵՐՈՒՍԱՂԷՄ
(ԱՅՁՄ Ն. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԲՕՐ-ՍԱՅԻՏԻ ՈՐԲԱՆՈՑԻՆ ՄԷՋ)

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՈՐԲԱԽՆԱՄ
ԿԵԴՐ. ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

- ԳԵՐ. Յ. ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿ. ԳՈՒՇԱԿԵԱՆ, ՆԱԽԱԳԱՀ :
- ԼԵՒՈՆ ԱՍԱՏՈՒՐ, ԱՏԵՆԱՊԵՏ :
- ՏԻԿԻՆ Յ. ՍԷԹԵԱՆ, ԳՈՒ - ԱՏԵՆԱՊԵՏ :
- ԱՐՏԱՇԷՍ ՆԵՏՈՒՐԵԱՆ, ԱՏԵՆԱԳՊԻՐ,
- ՕՐ. ՍՕՖԻ ՄԱՆԻՍԱԼԵԱՆ, ԳՈՒ - ԱՏԵՆԱԳՊԻՐ :
- ՏՕԲԹ. Պ. ՍԵՐՈՎԲԵԱՆ, ԳԱՆՁԱՊԵՏ :
- ՆԱԶԱՐԷԹ ԱՂԱԶԱՐՄ ԵՒ ՃԱՆԻԿ ԶԱՔԸՐ՝ ԽՈՐՀՐԳԱԿԱՆ :
- ՔԱՐՏՈՒՂԱՐ. ՕՆԵԿ ՄԱՀՏԷՍԵԱՆ :

ՀԱՍՑԷ = Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻ, ԳԱՀԻՐԷ :

ՀԱՅ ՈՐԲԵՐԸ ՅԵՏՈՅ



ՀԱՅԿ. ԲՍՐԵԳ. ԸՆԳՀ. ՄԻՈՒԹԵԱՆ ՈՐԲԵՐԸ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԷՋ

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՏԻԿՆԱՆՑ ՈՐԲԱԽՆԱՄ
ԿԵԴՐ. ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

- ՏԻԿ. Վ. Յ. ՅԱԿՈՒԵԱՆ, ԱՏԵՆԱՊԵՏ :
- Վ. Ա. ԲԻԹԱՊՃԵԱՆ, ԳՈՒ - ԱՏԵՆԱՊԵՏ :
- ՕՐ. Մ. ՊԱՇՊԱԶԻՐԿԵԱՆԵԱՆ, ԱՏԵՆԱԳՊԻՐ :
- ՏԻԿ. Բ. Յ. ԿՈՍԴԻԿԵԱՆ, ՔԱՐՏՈՒՂԱՐ :
- Չ. Մ. ԳԱՐԱԿԷՕՋԵԱՆ, ԳԱՆՁԱՊԵՏ :
- ՏԻԿՆԱՅԲ Յ. Ս. ԹԱԽՇԱՆՃԵԱՆ, Ա. Ս. ԹԷԼՖԷԱՆ, Ս. Կ. ԿԻՒՊԵՆԿԵԱՆ ԵՒ
Յ. ՔԷԼԷԿԵԱՆ՝ ԽՈՐՀՐԳԱԿԱՆ :

ՀԱՍՑԷ = 287 FOURTH AVENUE, NEW YORK

ԿՏԱԿՆԻԴ ՄԻ՝ ՅԵՏԱԶԳԷՔ

ՕՐԻՆԱԿ ԱՌՆԵՐ
ՅՈՅՆԵՐԵՆ ԵՒ...
ՀՐԵԱՆԵՐԵՆ.....

Այն բարեւէր սրցաւ հայերը որ կը փափախին չիս մահու բարեգործական նպասակի մը բողոյ իրենց հարսուրիւնը կամ մէկ մասը, պէ՛տ չէ որ օր յիսաճգնն այդ ձեւակերպութիւնը, բանգի մահը ամէն վայրկեան մ'եր դրան մօտ դարսնակալ կըստաւ: Անոնք մանաւանդ որ բնական կամ ժառանգորդ չունին, անոնց բնա՛ւ ներքի չէ առանց կտակի մ'նալ: Պանդուխտին եւ նամբորդին համար եւս կտակը պայման է:

Հեռասեւ ու բարեւէր ազգայիններէն ոմանք Հ. Բ. Ը. Միութեան Վսեմ. Նախագահին անուան կը կտակեն, բանգի վստահ են քէ Կեդր. Ժողովը, հաւատարիմ իր հրատարակչին եւ գրատւոց Երզումանին, խղճմտօրէն եւ առանց շեղումի պիտի գործադրէ կտակին պայմանները եւ վայելչօրէն պիտի յաւերժացնէ կտակակատարին յիշատակը, առանց ազդուելու արտաքին ազդակներէն՝ որ կը ձգտին ըստ իմաց շեղումներու մղել:

Հ. Բ. Ը. Միութեան կտակ ընել փափախողները լաւ կ'ընեն փաստարանի միջոցաւ պատրաստել թաղով իրենց կտակը, իրենց գտնուած երկրին օրէնքներուն համաձայն: Պիւտութիւն չունեցողները կրնան գէր իրենց կամ ուրիշ մը ձեռագրով պատրաստել իրենց կտակը, եւ ստորագրել կամ խաչանիշել, վկաներու կողմէ: Եւս հաստատելով, եւ պիտի բողոյ տեղական կամ ազգային իշխանութեանց մօտ:

Կտակի է նաեւ կտակել, պայման դնելով որ երբ ժառանգորդ մ'նացած չէ, բողոյ ինչքն Հ. Բ. Ը. Միութեան պատկանի վերջնականապէս՝ այս կամ այն նպատակին համար: Կտակի է վերջապէս, եւ ասիկա ամէնէն ապահով ձեւն է, ի կենդանութեան նուիրել Հ. Բ. Ը. Միութեան, ցմահ եկամուտները իրեն վերադասելով եւ չիս մահու բարի նպատակի մը յատկացնելով:

Առ այս դիմել Կեդր. Վարչ. Ժողովին կամ Տեղ. Մասնաժողովներուն:



ԼԱԹԱՔԻԱՅԻ ՀԱՅ ՏԱՐԱԳՐԵԱԼՆԵՐԸ

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՆՊԱՍՏԵՐԸ 10 ԱՄՍՈՒԱՆ ՄԻՋՈՑԻՆ

(ԳԵԿՏԵՄԲԵՐ 1918 — ՅՈՒՆԻՍ 1919)

	Ե. Ո.
ԲՐ - ՍԱՅԻՏԻ ՈՐԲԱՆՈՑ - ՎԱՐՉԱՐԱՆԻՆ	4582
» « ՄԻՈՒԹԵԱՆ » ՎԱՐՉԱՐԱՆԻՆ	2243
» ԱՅՐԻԱՆՈՑ - ԱՇԽԱՏԱՆՈՅԻՆ	196
ԳԱՀԻՐԷԻ ՏԻԿՆԱՆՑ ԿԵԳՐ. ՀԱՆԳԵՐՁԱՐԱՆԻՆ	11495
ՏԷՕՐԹ - ԵՅՒԼԻ « ԲԷԼԷԿԵԱՆ » ՈՐԲԱՆՈՅԻՆ (վերաբացուած)	1478
ԳԱՄԱՍԿՈՍԻ տարագրեալներուն, զաղբակներուն եւ որբերուն	1725
ՀԱԼԷՊԻ	3417
ՄԵՐՍԻՆ - ԱՏԱՆԱՅԻ	4185
ՏԷՐԱՅԻ	800
ԻՍԿԷՆՏԵՐՈՒՆԻ	400
ԵՐՈՒՍԱՂԷՄԻ	200
ՄԱԼԱԹԻԱՅԻ	100
ՀԱՅՅԱՅԻ. ԱՔԻԱՅԻ ԵՒ ՏԻՊԵՐԻԱՅԻ	206
ՍՈՒՐԻՈՑ ՆՊԱՍՏԻ ԵԳԻՊՏԱՀԱՅ ՊԱՏՈՒՐԱԿՈՒԹԵԱՆ ձեռամբ	1000
ՀԱՃՃԻՆ ՈՐԲԱՆՈՅԻՆ (ղեւակագմ)	300
ՋԷՅՅՈՒՆԻ ՎԵՐԱՇԻՆՈՒԹԵԱՆ (ներգաղբին առթիւ)	500
ԿԵՍԱՐԻՈՑ այրիներուն եւ որբերուն	300
ԳԱՀԻՐԷԻ վերջին աղետալներուն	257
ՄԱՍՆԱՒՈՐՆԵՐՈՒ աննստական նպատակներ	668
ՉԱՆԱՉԱՆ նպատակներ	1109

ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԸՆԴՀ. ՆՊԱՍՏԵՐՈՒ [ՍԵՊՏ. 1918 — ՅՈՒՆԻՍ 1919] ԵԳ. ՈՍԿԻ 35161



Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ՏԻՕՐԹ-ԵՅՒԼԻ ԲԷԼԷԿԵԱՆ ՈՐԲԱՆՈՑԸ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈՐԲԱՆՈՑ 1912
ԵՒ ԿԱՌՈՒՑՈՒՆԵՑԱԻ ՄԻ-
ՈՒԹԵԱՆ ԸՆԴԵՐԱՐ ԱՆ-
ԴԱՄ ՏԻԳՐԱՆ ԵՒՆԵ ԳԷ-
ԼԷԿԵԱՆԻ ԾԱԽԿՈՎ :
ՈՒՆԷՐ 100 Ի ԶԱՓ ՈՐ-
ԲԵՐՈՒ ՈՐՈՆՑ ԿԸ ՏՐԱՆՔ
ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԹՈՒ-
ԹԻՆՆ ՄԸ : 1915 ԻՆ.
ԹՈՒՐԿ ԿԱՌԱՎԱՐՈՒ-
ԹԻՆԸ ԳՐԱԼԵՑ ՈՐԲԱ-
ՆՈՑԸ ԵՒ ԱՔՍՈՐԵՑ
ԵՆՂՃ ՈՐԲԵՐԸ. ՈՐՈՆՑ.
ՄԸ ՇԱՏԵՐԸ ՆԱՀԱՏԱԿ-
ՈՒՆԵԱՆ . . . : ԱԶԱ-
ՏԱԳՐՈՒՄԸՆ ՎԵՐՁ, ՊՈՋ
ՄԸ ԵՐ ՔՐԱՆՍՍԱԿԱՆ
ԶՈՐԱՆՈՑ ԾԱՌԱՅԵՑ :
ՎԵՐՁԵՐՈՒ. ՎԵՐԱՐԱՅ-
ՈՒՆԵԱՆ. 200 ՈՐԲԵՐԱԿ :

ԲԱՂԴԱՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿ
 Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԵԼՄՏԱԿԱՆ ԿԱՑՈՒԹԵԱՆ
 (1906 - 1918)


Տ Ա Ր Ի	ՀԻՄՆԱԿԱՆ	ՄԱՍՆԱԽՈՐ	ԸՆԴՀԱՆՈՒՐ	ՀԻՄՆԱԿԱՆ	ՄԱՍՆԱԽՈՐ	ԸՆԴՀԱՆՈՒՐ
	ԵԿԱՄՈՒՏԵՆ	ԵԿԱՄՈՒՏԵՆ	ԵԿԱՄՈՒՏԵՆ	ԴՐԱՄԱԳԼՈՒԽ	ԴՐԱՄԱԳԼՈՒԽ	ԴՐԱՄԱԳԼՈՒԽ
	ԵԳ. ՈՍԿԻ	ԵԳ. ՈՍԿԻ	ԵԳ. ՈՍԿԻ	ԵԳ. ՈՍԿԻ	ԵԳ. ՈՍԿԻ	ԵԳ. ՈՍԿԻ
1906-1910	22756	15862	38618	15109	5890	20999
1911	8942	1075	10017	4262	957	5219
1912	8215	6182	14397	2501	5386	7887
1913	10609	3161	13770	4311	2675	6986
1914	6466	2522	8988	1762	1914	3676
1915	4707	12787	17494	1063	393	1456
1916	5962	3277	9239	1726	1770	3496
1917	9239	4989	14228	4017	1714	5731
1918	8832	20092	28924	3230	689	3919
1906-1918	85728	69947	155675	37981	21388	59369



Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԲՕՐ-ՍԱՅԻՏԻ ՈՐԲԱՆՈՑ - ՎԱՐԹԱՐԱՆԻՆ ՈՐԲՈՒՀԻՆԵՐԸ

ԲԱՂԴԱՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿ
 Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԸՆԴՀ. ՆՊԱՏՏՆԵՐՈՒ (1906-1918)

Տ Ա Ր Ի	ՀԻՄՆԱԿԱՆ	ՍՏԻՊՈՂԱԿ	ՆՈՒԻՐԱՏՈՒ	ՀԱՆԳԱՆԱ	ԸՆԴՀԱՆՈՒՐ
	ԵԿԱՄՈՒՏԵՆ	ՀԻՄՆԱԴՐԱՄ	ՈՒԹԻՆՆԵՐԷ	ԿՈՒԹԵԱՄՔ	ՀԱՄԱԳՈՒ
	ՆՊԱՏՏՆԵՐ	ՆՊԱՏՏՆԵՐ	ՆՊԱՏՏՆԵՐ	ՆՊԱՏՏՆԵՐ	ՄԱՐ
	ԵԳ. ՈՍԿԻ	ԵԳ. ՈՍԿԻ	ԵԳ. ՈՍԿԻ	ԵԳ. ՈՍԿԻ	ԵԳ. ՈՍԿԻ
1906-1910	5967,160	—	3722,289	6490,097	16179,546
1911	2851,270	—	350,204	—	3201,474
1912	3799,434	—	337,390	—	4136,824
1913	3247,054	—	192,440	380,579	3820,073
1914	830,451	1495,750	174,725	—	2500,926
1915	3153,583	200,000	566,962	10124,800	14045,345
1916	1758,773	292,500	2066,113	—	3824,886
1917	3870,086	—	2573,925	658,695	7395,206
1918	3170,610	200,—	15413,696	—	18784,306
1909-1918	28648,421	2188,250	25397,744	17654,171	73888,586



Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԲՕՐ-ՍԱՅԻՏԻ «ՍԻՍՈՒԱՆ» ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԻ ԵՒ ՆԱԿԱՐԹԱՐԱՆԻ 2250 ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ԲԱՆԱԿԸ

ՄԵՐ ՈՐԲԵՐԸ

ՈՐԲԵՐ ՊԱՆԵԼՈՒ ԵՒ ՊԱՏԱՊԱՐԵԼՈՒ ՉԵՐ ԳԱՆՎԱՓԱՐԸ ՀԻՄՆԱԼԻ Է: ՀԱՅԳԱԿԱՆ ԴԱՏԻՆ ԱՄՐՈՂՋ ԱՊԱԳԱՆ ԱՅՍ ՈՐԲԵՐԷՆ ԿԱԽԵԱԼ Է: »

ԳՆԴԱՊԵՏ ՊՐԷՄՕՆ
ԿՈՒՆԿՈՑ ԸՆԳՉ. ՎԱՐՄԶ

Հ. Բ. Ը. Միութեան առաջին որբերուն անձնուէր մայրիկին՝ Տիկ. Վիքորիա Արցառուցիի անդրանկի կոչը, Երուսաղէմէն:—

Միօնի բարձունքէն կ'ուզղեմ ձեզ անդրանկի եւ յոյժ անկեղծ ողջոյնս, աստուածային մեծ զոհարեութեան վկայ այդ լեռնէն՝ որ եղաւ նաեւ խորհրդանշանը ամէն յոյսերու:

Հայեր՝

Ձեր ամէնքին է որ այս կոչը կ'ուզղեմ: Ո՛վ որ ալ ըլլար, ու՛ր որ ալ ըլլար, մտիք ըրէք ինձի: Գործելու ժամը հնչած է: Մի խնայէք ձեր ջանքերը, ձեր սիրտը, ձեր դրամը:

Ձեռքերնիդ երկնցուցէք ամենքդ ալ եւ ձեր սիրտերով շրջանակ մը յօրինեցէք սա զոյգ մը բառերուն « ՄԵՐ ՈՐԲԵՐԸ »:

Ձեր փութկոտութեամբը եւ առատածեռութեամբը մեզի ի վիճակի դրէք զանոնք փրկելու, կարելի եղածին չափ մեծ թուով:

Ամէն կողմէ ծայր կուտան այս հէք որբերը, որոնք ո՛չ հայրիկ ունին, ո՛չ մայրիկ, ո՛չ պաշտպան, ո՛չ տանիր, այլ միայն հաւաստի ձեռք վրայ . . . : Կարծես ծովու մակընթացութիւնն է որ կը մտտենայ եւ առաջին ափքները արղէն իսկ մեր սարերուն կը բաղկին: Անոնք ամէն կողմէ իրենց ձեռքերը մեզի կ'երկարեն եւ մեր օգնութիւնը կը հայցեն՝ յանուն այն դիւցազնական հաստատամտութեան որով իրենց ծնողները տառապեցան եւ մեռան Հայաստանի Պատիւին, Անունին եւ Եկեղեցիին համար:



ՀԱԻՐԱՆԻ ՇՐՋԱՆԻՆ ՄԷՋ ՎԵՐՋԻՆ ԱԶԱՏԱԳՐՈՒԱԾՆԵՐԸ

(ԴԱՄԱՍԿՈՍԻ ԵՍՊՆԵՂԻՔԱՅՐԵԱՆ ԱՐՇԱԻԱԽՈՒՄԲԻՆ ԿՈՂՄԷ)

ԻՐԱՔԱՆՁԻՐ ՈՐԲԻ ՊԱՇՏՊԱՆԻՆ ՅԱՆՋՆՈՒԱԾ ՎԻՃԱԿԱՅՈՑՑ - ՎԿԱՅԱԳՐԻ ՊԱՏՃԵՐԸ

ՈՐԲԱՆՈՑ
ՀԱՅՍ. ԲԱՐԵԳ. ԸՆԳՉ. ՄԻՈՒԹԵԱՆ

ՈՐԲԱՆ ԱՆՈՒՆԸ *Չանուշ Անձրայիան* ԲՈՒՐ **56**
ԳՆԵՏԳԱՆԻՆ ԱՆՈՒՆԸ *Տիար Գ. Տիգուր* ՏԵՂ. *Երևան*

➔ ՈՐԲԱՆ ՎԻՃԱԿԱՅՈՑՑԸ Գ➔

ՀԱՅՐԸ *Թորոս Անձրայիան*
ՄԱՅՐԸ *Բոյաճի* " "
ԲԱՎԱՅՐԸ *Կիւր - Տալ*
ՍԵՍՈՐԱՎԱՅՐԸ *Պազրաբ*
ՏԱՐԻՑ *14*
ՍՄ. *Եւրոպայի և Ասիայի միջև ընկած Երևանի քաղաքում*
Միջին Երևանում 1918 թ. 20-ին:

ԿՐԾԱԿԱՆ ԵՒ ՈՐԲԱՆԱՍ ՅԱՆՋԱՆՈՒՄ
ԱՏԵՆԱՅՊԻՐ ԱՏԵՆԱՊԵՏ

Վոյժի Անձրայիան
Հանդիս. 20 Յուլի 1919

Կոչ մը որ ամէն հայրուն սիրտին կը խօսի


Միշտի հայրենակիցներ, Անձրայիանցիք եւ սիրեցիկ հ'ապաստեն մօտաւոր ծագմանը Ազատական Արևիկ, որուն կենսաւոր հառաջադրանքն էր սակ ափսի վերածնի պատմական Հայաստանը իր բովանդակ փառքին մէջ վեհապան, եւ դիւցազն Հայ Յեղը իր անխնայեղեկ պիտի յառնէ շարժապետը եւ ազատ:

Այս է մեր ազգային հաւատքը հարազատ եւ անմեռ: Եւ այս հաւատքին ազդեցնող ոյժն է որուն շակ արկած ենք մեր գեղային կամքը, փրկելու համար ցուաւանց մեր ազգին կորիւնները — ծնողազուրկ մանուկները, այս՝ նուիրական այն նոթարները — գործարար մայրիկ հսակեցիկ մեզի իրենց ստապանի համարուն վայ: Որբեր, ո՛հ, այդ անո՛ր անհրաժեշտ լուսած հազարաւոր անոնց պզտիկները, որոնք կ'ապրեն, սուրբ եւ անուր կոտորածներէն մազապուր ազատած՝ մայրական զուր կը հայցեն մեզմէ, սիրոյ եւ խանդապաստանի կարօտը կը մաշին: — Վերապի կ'ուզեն ըզնակար: Մեր անհրաժեշտ պարտն է, եւ մեր վեհապան առանձնաճանաչմանը, որ փրկեն այս որբերը, եւ ազդեցնեն զանոնք իրեն կորիկը վաղուան ազատագրում Հայաստան:

Այս խոր գիտակցութեամբ եւ ցեղին ներքոյ բնագոյրը զինում՝ Հ. Բ. Ը. Միութեան Ամերիկայի Վեդրոնական Որբախնամ Մարմին, Վեդրոնական Վարչութիւնէն իրեն տրուած իրաւասութեամբ, ներկայիս կոչ կ'ընէ: Բոլոր պատմական եւ արցաւ ազգայիններու, որ երկ կարելի է համարեն իրենց ազգանուէր ջանքերը եւ համագործակցին աւելի եւս արդիւնաւոր բնակելու մեր որբապաշտպան սուրբ գործը:

Ան այս ջերմագին կը խնդրենք որ յեղույց մէջ կազմակերպէ Հ. Բ. Ը. Միութեան Որբախնամ Պատմական Յանձնախումբ մը, երկ արդէն գոյութիւն չունի այն, եւ հաղորդակցութեան մէկէ Վեդրոնական եւս ի նկատ առնելով օրուան ստիպողական պահանջը՝ հասին ժամանակաւորապէս լծուի այս սուրբ գործին շարքը, որ իրենց ալ ստիպ այնքան մօտիկ է եւ նուիրական:

ԳՆԸԱՊԵՏ ԱՏԵՆԱՊԵՏ
ՆԻՒ-ԵՕՐԲ ՏԻԿ. Զ. Մ. ԳԱՐԱԿԵՕԶԵԱՆ ՏԻԿ. Յ. Մ. ՅԱԿՈՐԵԱՆ



ՀԱՄԱ - ՀՈՄՍ ՇՐՋԱՆԻ ՈՐԲԵՐՈՒՆ ԺԱՄԱՆՈՒՄԸ ՕՍՄԱՆԻԷԻ ԿԱՅԱՐԱՆԸ



Հ. Բ. Բ. ՄԻՈՒԹԵԱՆ ԲՕՐ - ՍԱՑԻՏԻ « ՄԻՍՈՒԱՆ » ՄԱՆԿԱՊԱՐՏԷՋԻ ՓՈԲՐԻԿՆԵՐԸ



ՆՈՅՆ ՈՐԲԵՐՈՒՆ ԺԱՄԱՆՈՒՄԸ Հ. Բ. Բ. ՄԻՈՒԹԵԱՆ « ԲԷԼԷԿԵԱՆ » ՈՐԲԱՆՈՅԸ



Հ. Բ. Բ. ՄԻՈՒԹԵԱՆ « ՄԻՍՈՒԱՆ » ՎԱՐԺԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՅՉԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ

ՊԱՏԻՈՅ ԷՋ ՄԸ

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ՄԵՂՈՒԱԶԱՆ ՏԻԿԻՆՆԵՐՈՒՆ

Հպարտութեամբ վեր կը հանենք այն ազգագուտ դերը զոր բազմաթիւ Հայունքներ կը կատարեն, անձնութեամբ ծառայելով Բարեգործականի վեհ նպատակին : Իր անխորական կազմին շնորհիւ, անոր դրօշին տակ գմայլելի եռանդով կը գործեն հայ իգական սեռի մեկէ աւելի փայլուն ներկայացուցիչները. ըլլալ կեղրոնի մէջ թէ այլուր : Ծառայութիւնները՝ զոր Միութեան համեստափայլ բարեկամութիւնները մատուցած են՝ անգնահատելի են, և առանց ջափազանցութեան կարելի է ըսել թէ՛ Հ. Բ. Ը. Միութեան յաջողութեան գերագոյն ազդակներն մին եղած է Հայունքներու սրտցաւ համակրանքը և նուիրումը անոր ձեռնարկութեանց : Երբ հանրային գործ մը կիններուն սիրտին կը տիրէ, անոր յաջողութիւնը ապահովուած կրնայ նկատուիլ :

Մասնաւոր յիշատակութեան արժանի են երկու ծաղկաբոյր փերակներ մեղուազան գործունէութեան, մին՝ Գանիրէի Հանդերձարանի Տիկնանց Կեդր. Յանձնախումբը և միւսը՝ Նիւ-Եօրքի Տիկնանց Որբախնամ Կեդր. Յանձնախումբը, երկուքն ալ գլխաւոր սիւները Հ. Բ. Ը. Միութեան, որ պաշտելի անձնութիւններով լծուած են եղբայրական օգնութեան երկու կարեւորագոյն աշխատութեանց՝ Հանդերձեղէն և Որբախնամ :

Ամերիկայի մէջ բազմաթիւ Տեղ. Մասնաժողովներ երկսեռ են, ինչպէս՝ Նիւ-Եօրք, Չիքագօ, Նեշուէ, Թրենթըն, Ռեքս - Հոպօքըն, Ֆրանքլին, Չրլսի, Տայնուպա, Ռիվըր, Սենթ-Լուիս : Սինկափուրի և Պարավիայի Տեղ. Մասնաժողովները բացարձակապէս կիներէ բաղկացած են : Հայկեաթի, Տօրքտարքի, Ռեօքլընի և Օճագլըլի (Կիլիկիա) Օժանդակ Մասնաժողովներն ալ լոկ կիներէ կազմուած են :

Անկարելի է մեզի այս պատշաճ էջը փակել առանց յիշատակելու թէ՛ Միութեան կրթական և Որբախնամ Կեդր. Յանձնախումբին մէջ գործօն դեր մը կը կատարեն երկու կրթանուէր կին - շրջաններ, իսկ որբախնամ գործին նուիրուած են, յաջորդաբար. Տիկ. Վիքթորիա Արշարունի և Տիկ. Մաքրունի Նետուրեան՝ որ դեռ կը շարունակէ իր մայրական խնամատարութիւնը ընծայել նարիւրաւոր որբերու, ամենուն գմայլանքին մէջէն, և զոր Ամեն. Զաւեն Պատրիարքը անձամբ ոսկի խաչով պատուած է տարագրութենէ վերադարձին :

Պատիւ՝ հայ իգական սեռին :



ՏԻԿ. ՄԱՔՐՈՒՇԻ ՆԵՏՈՒՐԵԱՆ
ԲՈՐ - ՍԱՅԻՏԻ ՈՐԲԱՆՈՅԻՆ
Մ Ա Յ Ր Ի Կ Ը



ՍԱՄՍՐԷ ՎԱՐԴ. ՍԻՐՈՒՆԵԱՆ
ՏԵՏՈՒՉ ԲՈՐ - ՍԱՅԻՏԻ
ՈՐԲԱՆՈՅԻՆ



ՏԻԿ. ՎԻՔՅՈՐԻԱ ԱՐՇԱՐՈՒՆԻ
ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՈՐԲԱՆՈՅԻՆ
Մ Ա Յ Ր Ի Կ Ը

« ԶՄԵՐ Է ԵՒ ՀԱԶԱՐԱՒՈՐ ԱՂԵՏԵԱԼՆԵՐ, ՄԵՐ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ, ՄԵՐ ՔՈՅՐԵՐԸ, ԾԵՐԵՐ ՈՒ ՀԻՒԱՆԴՆԵՐ, ՀԱՐՍԵՐ ԵՒ ՈՐԲԵՐ, ՄԵՐԿ ԵՆ, ԳԸՐԵԹԷ ԲՈԼՈՐՈՎԻՆ ՄԵՐԿ ... : ՄԱՐԴԿԱՅԻՆ ԶԳԱՑՈՒՄԸ ԵՒ ԱԶԳԻՆ ՊԱՏԻՈՅ ԿԸ ՊԱՀԱՆՁԵՆ ՈՐ ԱՆՈՆՔ ՀԱԳՈՒԵԹՆԵՆՔ : »

ՏԻԿ. ԱՌԱՔԵԼ ՊԷՅ ՆՈՒՊԱՐ

ՄԵՐԿԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ...

Քաղուածք Հանդերձարանի Տիկնանց Կեդր. Յանձնախումբի վերջին կոչէն


« . . . Թուրքին Տիրաններէն սղջամբ Տողոպրած մեր հազարաւոր քոյրերն ու եղբայրները, պաղատագին, մեր օգնութեան կը սպասեն. պէտք է որ առատ հանդերձեղէն դրկենք, ամէն օր հակեր Տարբայ հաններ, անհամար մերկութիւններ ծածկելու համար : Անոնց մէջ բազմաթիւ որբեր կան : Արդէն ամէնքն ալ՝ չորս տարուան անլուր տառապանքներէն յոգնած և ուժասպառ՝ մեր շունչին, մեր ժպիտին, մեր նուէրին պէտք ունին : Պիտի թողու՞նք, սիրելի քոյրեր, սիրելի եղբայրներ, որ մենէ բայց մը անդին, անոնք փճանան, անոնք, որոնցմով վաղը ազատ Հայաստանը պիտի կազմուի : Անկարելի է այդ բանը :

Վերջին Տիգ մը ուրեմն : Օգնեցէք մեզի, որպէսզի Հ. Բ. Ը. Միութեան Կեդր. Հանդերձարանը կարենայ անարտուճ պատասխանել իրեն ուղղուած կոչերուն. օգնեցէք մեզի, որպէսզի բոլոր մերկերը կարենանք անմիջապէս հագուեցնել : Մեր ձեռնարկին յաջողութիւնը ձեռնէ կախեալ է :

Ուստի և մեր ամբողջ յոյսը կը դնենք Եգիպտոսի և Արտասահմանի սրտցաւ Հայութեան վրայ և անձկանքով կը սպասենք մեր ներկայ թախանձագին կոչին զրական պատասխանին : »



Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԵՐՁԱՐԱՆԻ ՏԻԿՆԱՆՑ ԿԵՐ. ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ



Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԱՆՁՆՈՒԻՐ ՏԻԿԻՆՆԵՐԸ
ԿԵԴՐ. ՀԱՆԳԵՐՁԱՐԱՆԻՆ ՄԷՋ ԿՊԱՇԱՍԻՆ

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՆԳԵՐՁԱՐԱՆԻ ՏԻԿԱՆՅ ԿԵԴՐ. ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻԻ ԿԱԶՄԸ

ՏԻԿԻՆ ՆԵՒՋԻԳ ԱՌԱՔԵԼ ՊԷՑ ՆՈՒՊԱՐ, ԱՏԵՆԱՊԵՏ :

- » ՄԱՔՐՈՒՀԻ ՆԵՏՈՒՐԵԱՆ
- » Զ. ՄԻՀԱՆՕՅ
- » ՎԱՌԱ Վ. ՄԱԼԷՋԵԱՆ, ԱՏԵՆԱԳՊԻՐ :
- » Զ. ՄԵԼԻՔՆԵԱՆ, ԳԱՆՁԱՊԵՏ :
- » Մ. ԱՆՏՕՆԵԱՆ, ՓՈՒ - ԳԱՆՁԱՊԵՏ :
- » Ա. ՏԷՄԻՐՃԵԱՆ, ՄԹԵՐԱՊԵՏՈՒՀԻ :

ՏԻԿԱՑՔ Հ. ԳԱԼՃԵԱՆ, Վ. ԷՍԱՅԵԱՆ, Զ. ՍԻՆԱՆԵԱՆ, Օ. ՏԷՐՎԻՇԵԱՆ, ԿԱՐԱՊԵՏԵԱՆ, Մ. ՇԱԼՃԵԱՆ, ՕՐԻՈՐԳԻ Հ. ԱՆԴՐԱՆԻԿԵԱՆ, Ի. ՕԳՈՍՏԻՆՈՍԵԱՆ, Զ. ՍԵԼԵԱՆ, ՎԻՐԺԻՆԻ ՄԱԼԷՋԵԱՆ՝ ԽՈՐՀՐԳԱԿԱՆՆԵՐ :

Օր. է. ԽՏՐԵԱՆ, ՏԼՈՐԷՆ ԱՂԽԱՍԱՆՈՅԻ, և Տ. Ս. ՏԱՏԱՐ, ՏԼՈՐԷՆ ՄՔԵՐԱՆՈՅԻ :
Իրան.— Յանձնախումբին մոտ կազմուած է նաև Գևան և Առաքելան Մասնախումբ մը :

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ՈՐԲԵՐՈՒՆ ՈՒՂԵՐՁԸ

Իմ բոլոր ընկերներու և ընկերուհիներու կողմէն, մեր ամսվարջի հանդէսին առթիւ, կուգամ սա քանի մը խօսքերը թոթովել սրտովին :

Մենք ամենքս ալ կը ճանչնանք այն բարեգութ ձեռքը որ զմեզ համախմբած է այսօր այս հովանիին ներքեւ, ուր միտքը կը լուսաւորուի հայրենի գաղափարով և հոգին իր թռիչքը կ'առնէ զէպի բարձունքներն իտէպին : Մենք հոս ամէնքս ալ կը շնչենք եղբայրական այն վճիտ մթնոլորտը որուն մէջ մեր խամբած երազներն և յոյսերը կը վերընծիւղին և զեղադալար պատկեր կը յօրինեն ոճիրէն զարնուած մեր դեռատի ճակատներուն շուրջ :

Մենք հպարտութիւնն ունինք այսօր մեր ահուելի տանջանքին, որով անգամ մըն ալ վերածընանք Ազգին և Հայրենիքին համար :

Մենք մինչև հիմայ ջանացինք, շնորհիւ մեր վրայ հսկող Բարեգործական Միութեան խնամքներուն, ըլլալ ցեղին առոյգ զաւակները որոնք մահուան սարսափներէն ուրիշ բան մը չունին հիմայ իրենց հոգիին մէջ թարուն, եթէ ոչ յիշատակը աստուածային բարութեան որ հրեշտակի մը պէս իր լայն թեւերուն տակ առաւ ու ծածկեց մեր աղետարշ այլ խոստմնալից որբութիւնը :

Մենք աշխատեցանք ի դերեւ չի հանել մեր դաստիարակութեան ջամբուած ամէն խնամք և հոգածութիւն, և այսօր երբ ինձի կը տրուի արտայայտել իմ և բոլոր ընկերներու զգացումները, հպարտօրէն և ճակատաբաց անդրժեղի խոստումը կ'ընեմ ապագային :

Հայրենիքին աւերակներուն վրայ պիտի բարձրանայ մեր կեանքին անվկանդ կոթողը ու մեր ոտքին տակ, լեցէ՛ք, արդէն իսկ, արոփիւնը բաջայաղթ՝ սերունդներու ծառացումին :

Ի զուր պիտի չանցնի երբեք մեր ուսուցիչներուն և ուսուցչուհիներուն նուիրական գործը, և լոյսի ամէն կայծ մեր մտքին մէջ արշալոյս մը պիտի ըլլայ :

Կեցցէ՛ Հ. Բ. Ը. Միութիւնը :

Եւ կեցցէ՛ Հայրենիքը որուն կարմիր և յաղթապանծ դրօշին տակ այսօր կ'ուխտենք մեծնալ իբրև Հայկի ու Վահագնի կորիւններ :

ՍԱՆՈՒՆՔ ԵՒ ՍԱՆՈՒՀԻՔ

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԲՕՐ - ՍԱՅԻՏԻ ԳԱՂԹԱՎԱՅՐԻ ՈՐԲԱՆՈՅԻ



Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ՈՐԲԵՐՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ԿԵՆԴԱՆԻ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ

ԱՄԵՆՈՐԻ ԱՌԹԻԻ

ՅԱԻ՛Տ ՈՂԲԱՑԵԱԼ ՎՍԵՄ ԵԱԳՈՒՊ ԱՐԹԻՆ ՓԱՇԱՅԻ ՄԱՀՈՒԱՆ ՍՆԱՐԷՆ
Վ.ԵՐՋԻՆ ԵՕՍԻԸ

«... Նոր տարուան սեմին վրայ, Հայուիեան ազատագրումի այս նախընթացին, Հ. Բ. Ը. Մի-
ուծեան անձնիւր մէկ անդամին սէրն ու ողջոյնը Սո՛ղ երթայ մերբազատուած մեր եղբարբայտ
հայրենակիցներուն, որ Միջագետքէն մինչև Գաղեստին եւ Սուրիա, իրենց թշուառութեան տխուր
պատկերը մեզի կը ներկայացնեն. իբրև Տառապանքի ամէնէն սարսազողեցիկ համայնապատկերը
գոր մարդկութիւնը երբե՛ք երեւակայած ըլլայ... »

Անձնց ուրեմն մեր ամբողջ սէրը, անո՛նց մեր ժպտն ու համբոյրը :

Հ. Բ. Ը. Միութիւնը, իր բոլոր շարքերովը, զինակիրներ Հայ Բարեգործութեան բանակին,
ահա՛ եղբայրական Օգնութեան եւ Հայրենիքի Վերաշինութեան նուիրական գործին կը լծուի, ան-
վերապահ եւ անմագոհ նուիրումով, բանզի Պարտականութեան եւ Զոհողութեան վճռական ժամը
արդէն հնչած է: ամէն սրտցաւ Հայու համար. բայց մանաւանդ մեր սիրելի Միութեան ամէն մէկ
ուխտադիր Անդամին համար: »

Գահիրէ, 31 Դեկտ. 1918

ԵԱԳՈՒՊ ԱՐԹԻՆ ՓԱՇԱ



ԱԶԱՏԱԳՐՈՒԱԾ ՏԱՐԱԳՐԵԱԼՆԵՐՈՒ ԿԱՐԱՒԱՆ ՄՐ ՍԱԼԹԷՆ ԴԷՊԻ ԵՐՈՒՍԱՂԷՄ

Օ Գ Ն Ե Ց Է Ք

« ՏԵԼԷՔ, ՍԻՐՏՈՎ, ԳԱՆ ԹԷ ԶԵՈՒՊՎ : »
Վ. Մ.

ՕԳՆԵՑԷՔ Հ. Բ. Ը. Միութեան, եթէ կը սիրէ՛ք ձեր անեակ Հայ-
րենիքը ու ձեր թուառ Հայրենակիցները:

ՕԳՆԵՑԷՔ Միութեան Կեդր. Հանդերձարանին, որ հազարաւոր սա-
րագրեալներու եւ որբերու բոլորովին նոր հանդերձեղէն պատրաստելու
եւ հասցնելու ծանր բեռը ստանձնած է:

ՕԳՆԵՑԷՔ Միութեան Որբանոց-Վարժարաններուն (Բոր-Սայիս,
Տէօրթ-Եօլ, Դամասկոս եւ Հանրն), ուր բազմաթիւ որբեր կը պատրաս-
տուին եւ կը դաստիարակուին, որպէսզի ուրիշ որբեր եւս կարենանք
ընդունիլ Հ. Բ. Ը. Միութեան պատշաճութեան տակ:

ՕԳՆԵՑԷՔ Միութեան Բոր-Սայիսի « Սիսուան » Վարժարանին, ուր
չուրջ 2250 երկուտ տղաք ուսում կ'առնեն եւ տնտեսական դաստիարակու-
թեամբ կը կրթուին:


ՕԳՆԵՑԷՔ Միութեան Մերսինի եւ Դամասկոսի Հիւանդանոցներուն
(Դեղարանով եւ Դարմանասունով), ուր անհամար գաղթականներ եւ
սարագրեալներ կը դարմանուին եւ կը բուժուին:

ՕԳՆԵՑԷՔ Հ. Բ. Ը. Միութեան Գործատուներուն, Աշխատանոցնե-
րուն, Այրիանոցներուն, եւ այլ ազգօգուտ ձեռնարկութիւններուն, որոնց
տնօրէնի հազարաւոր այրիներ եւ աղէտեալներ կ'աշխատեն ու կ'ապրին:


ՕԳՆԵՑԷՔ Հ. Բ. Ը. Միութեան, ձեր յարմար դասած ձեռով, բայց
ձեր կրցածէն անելի, որպէսզի, մեր աչքին առջեւ, անօրութեան, մե-
կութեան եւ հիւանդութեան զոհ չերթան առո՞ք որ կրցան հողապիլ ի-
րենց դահիճներուն նիւաններէն:

ՕԳՆԵՑԷՔ անսիրտապէս, եւ առաստաններէն, առանց դանդաղե-
լու, առանց սակարկելու. քանզի ո՛րքան ալ շատ տաք, եթէ տաք իսկ
ձեր բոլոր ունեցածը, նորէն քիչ է եւ կրկին շա՛տ բարեբախտ է՛ք բաղ-
դատելով ձեզ Հայութեան նահատակներուն եւ աղէտեալներուն հետ, որոնց
սովասանց բեկորներով է որ ազատ ու միացեալ Հայաստանը պիտի
կազմուի:





Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԴԱՄԱՍԿՈՍԻ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻՆ ՄԷՋ
ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ՄԸ



Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԴԱՄԱՍԿՈՍԻ ՋՐԻ ԴԵՂԱՐԱՆԸ



Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵԴՐ. ԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ ԳՆԴԱՊԵՏ ՌՕՄԷՕՆ
Կ'ԸՆԴՈՒՆԻՆ ԲՕՐ-ՍԱՅԻՏԻ ԳԱՂԹԱՎԱՅՐԻՆ ՄԷՋ



Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԲՕՐ-ՍԱՅԻՏԻ ՈՐԲԱՆՈՑԻՆ ՈՒՍՈՒՑԶԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ
(ՍԱՍԲԲԸ ՎԱՐԴ. ՍԻՐՈՒՆԵԱՆ ԵՒ ՏԻԿ. ՍԱՔՐՈՒՅԻ ՆԵՏՈՒՐԵԱՆ)



« ԱԶԱԿՑԵԼՈՎ Զ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ
ՄԱՌ-ԱՅՈՒՄ ԵՆՔ ՄԱՅՐ-ՀԱՅՐԵՆԻՔԻՆ »
ԳԵՈՐԳ ԱՐԳԱՐ

« Լաւագոյն գործերը զովել, կը նշանակէ կասկածանքի մշուշներու մէջ պարուրել. այս եր-
« կիւղածութեամբ չեն զովեր Զ. Բ. Ը. Միութեան Բօր-Սայիտի Որբանոցը : Բայց երէ նոզիս
« մէջ խորան մը կայ նուիրական յուշերու և յիշատակներու, այդ սրբութեանց վսեմագոյնն և
« Բօր-Սայիտի Որբանոցին յիշատակը, ի տրիտուր օրնաձիբ շնորհակալութիւն : »

ՍԱՀԱԿ Բ., ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԻՂԻԿՈՅ

* * *

« Երէ Բարեգործականը պատերազմեն առաջուան իր ուրամեայ գոյութեան միջոցին ոչինչ
ըրած չ'ըլլար յօգուտ Ազգին, միայն պատերազմեն վերջ եզիպտոսի մէջ իր կազմակերպած « Միս-
ուան » ուլը, « Որբանոց » ուլը, « Այրիանոց » ուլը, « Արնետանոց » ուլը և « Հանդերձարան » ուլը արժանի պիտի
ըլլար արդէն Ազգին երախտագիտութեանը :

Բայց այս հինգ նաստատութիւնները, որոնք անոր բազմամեայ մեքենականութեան քանի
մը կտորներն են միայն, աւելնալով իրաւամբ գնահատուած իր նախկին գեղեցիկ արդիւնքներուն
վրայ, իր անուան ու կոչումին բովանդակ մեծութեան՝ նայրենիքի վերաշինութեան իր նուիրական ուխ-
տին բուն ճամբուն վրայ կ'տանին այսօր զինքը :

Անոնք որ տեսած են « Միսուան » ք. Բօր-Սայիտի աւագուտքին մէջ ծաղկած այս բանաւոր
Ովասիքը, ուր չորս տարուան միջոցին՝ կիլիկեցի 2000 քաջօրդիներ իրապէս ազգային կրթութիւն
մ'ստացան :

Անոնք որ այցելած են « Որբանոց » ք, Միսուանի այս տխրանոյշ Դոյրը, ուր Պաղեստինի, Սու-
րիոյ և Միջագետքի հեռաւոր անկիւններէն հաւաքուած աւելի քան 400 ծնողագուրկ մանուկներ իրենց
գերագոյն ծնողքին՝ Ազգին գորովանքովը տաքցան :

Անոնք որ մտած են ներս Որբանոցի կուշտին մայրօրէն նկող « Այրիանոց » ի բաղձալից վը-
րանաշարքէն, որոնց մէջ նարիւրեակ մը մանկամարդ սգաւոր հայուհիներ իրենց արժանի միտքաբար-
բիւնը կ'ընդունին :

Անոնք որ մտեն անցած են միւնոյն սանձան-
ներուն մէջ կանգնած երբեմնի « Արնետանոց » տաղա-
ւարներուն, որոնց մէջ մուրճն ու աղոցը՝ կռանն ու կը-
կոցը աշխատանքին կրգը կը բնդացնէին օրն ի բուն :

Եւ անոնք որ վերջապէս գիտակ են հոս՝ մեր աջ-
քին տակ՝ « Հանդերձարան » ի անտերեւեր յուրեան մէջ
կատարուող այն միբամիր տքնութեան, որով ազ-
նիւ եզիպտոսայուհիներ ըրին իրենց բոլոր կարելին՝
նագուեցնելու նամար բնաշխարհի և տարաշխարհի ի-
րենց դժբախտ ազգակիցներու մերկութիւնը, անոնք ա-
մենքն, այո՛, չեն կրնար իրենց սրտին խորքէն չ'օրննկ
խմատուն նայրենասիրութեան նոյն բարձր ոգին որ կազ-
մեց ու կազմակերպեց Բարեգործականը, ու « ձեռն ի
ձեռն » միութեան նշանակովը նուիրական իր դրօշը, ո-
րուն 14 տարիներէ ի վեր նամակրանքով նայեցաւ Ազգն
ամբողջ : »

ԹՈՐԳՈՍ ԵՊԻՍԿ. ԳՈՒՇԱԿԵԱՆ

« Նահատակ ցեղի մը ավագայ յոյսը կազմող,
ազգին սաներուն ապաստանարանը եղող Բօր-Սայիտի
Զ. Բ. Ը. Միութեան Որբանոցին կազմութիւնն ու կա-
նոնաւորութիւնը մեծագոյն տիրութեանքն է տառապա-
կոծ և վշտակիր նոզիներու : »

ԳԻՒՏ ԵՊԻՍԿ. ՄԻՆԹԱՐԵԱՆ

« . . . Կը վկայեմ անաչառ. խոստովանութեամբ որ եզիպտոսի հայութեան Զ. Բ. Ը. Միութիւնն
սքանչելի ընտրութիւն մը ըրած է, հայոց գաղթավայրին « Միսուան » երկսեռ վարժարաններով շուրջ
2300 ուսանողներու, որոնց ուսման ու կրթութեան հոգն ստանձնած են 60—70 բարեբարոյ երկսեռ
ուսուցիչներ և քանաններ, որք միմեանց հետ ներդաշնակ կը ջանան ազգին մնացորդին երկսեռ
մանկան այնպէս մը դաստիարակել տոնմային և հոգեկան կրթութեամբ, որ լինին ճշմարիտ հայեր ու
իսկապէս քրիստոնեաներ : »

ՍՏԵՓԱՆՆՈՍ ԱՐՔԵՊԻՍԿ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ


« Իբրև Ամերիկացի կամ Գանատացի, չեմ կրնար հաւատալ, որ ռեւե ազգասեր Զայ Զ. Բ. Ը.
Միութեան անդամ եղած ըլլայ, և երէ եւ եպիսկոպոս մը ըլլայի, այս բեմէն կոչ պիտի ընէի ձեզ,
որ երէ ձեր մէջ կան անդամ չեղողներ, անդամ գրուին անմիջապէս, վասնզի Բարեգործականին զերը
շատ մեծ է որբախնամ գործին մէջ : »

ՏՕԲԹ. ՄԷՔԱՂԸՄ




ԳԵՐ. ԹՈՐԳՈՍ ԵՊԻՍԿ. ԳՈՒՇԱԿԵԱՆ
Զ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ՊՍԱԽՈՅ ԱՆԴԱՄ
(ԶՆԴԿԱՍՏԱՆԻ ՊՍԱՌԻՐԱԿ)
ՆԱԽԱԳԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՈՐԲԱՆՈՍԱՄ
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱՌԻՄՔԻ

« Զայկ. Բարեգ. Միութեան Բօր - Սայիտի Որբանոց ու Այրիանոցը, զոր այս վրանաբաղաբին այնքան ուրիշ հանրօգուտ բաժիններուն վրայ աւելցած տեսնելու անակնկալ հաճոյքն ունեցայ, պարզ « Բարեգործական » հաստատութենէ մը աւելի, ազգային « Փրկագործական » կենտոնակ ձեռնարկ մըն է : Մեծ ուրախութեամբ ականատես եղայ այն հոգածու եռանդին որով փարած են շայս գործին՝ հաստատութեան վարչութիւնը և պաշտօնեւորիւնը, Ս. Առաջնորդ Հօր նախագահութեան տակ : Զայրենի



Հ. Բ. Ը. ՄԻՈՒՅԵԱՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ ԲՕՐ-ՍԱՅԻՏԻ ԳԱՂԹԱՎԱՅՐԻ ԶՐԱՆՑՔԻՆ ԵՋԵՐԲԸ



ԲՕՐ-ՍԱՅԻՏԻ ԳԱՂԹԱՎԱՅՐԻՆ ՎՐԱՆԱԲԱՂԱԲԸ (Տեղակայ Զայի. Լեզնոնի)

քի բուրաստաններն խլուած այդ ծաղիկները այս տարաշխարհիկ ջերմոցին մէջ պահպանուած և խրնամուած՝ մօտաօր օր մը հայրենի դաշտերն ու հովիտները գեղազարդելու պիտի ծառայեն : »

Մ. ՏԱՄԱՏԵԱՆ

« Յեղ մը կ'ապրի, երբ իր նորագոյն սերունդը կ'աճի կը բարգաւաճի, և առ այս Հ. Բ. Ը. Միութեան Բօր - Սայիտի Զայիական Բեմերին մէջ հաստատուած Որբանոցը իր առոյգ և առիւժադեմ սաներով մեծապէս յուսադրիչ տպաւորութիւն մը կը բոլու ամեն ուշադիր այցելուի վրայ : Մեծապէս գնահատելով Հ. Բ. Ը. Միութեան այս յոյժ գովելի ձեռնարկը, կը մեկնիմ քաղցր տպաւորութիւններ հետս տանելով դեպի Մանչեսթըր : »

Ա. Ն. ՕՏԱՊԱՏԵԱՆ

« Ուրեմն հայ կամաւորին բրած գոնողութիւններն չեն եղեր զո՛ւր . . . : »

Ժ. ՇԻՇՄԱՆԵԱՆ (Տեղակայ Զայի. Լեզնոնի)

ԱԶԱՏԱՐԱՐ ԽԱԶԸ



ՃԷՊԷԼ-ՄՈՒՍԱՑԻ ԴԻԻՑԱԶՆԵՐՈՒՆ ԱԶԱՏԱՐԱՐ ԽԱԶԸ (Բօր-Սայիտի գաղթական մէջ տօնական օր մը)

